ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ՄԿՐՏԻՉ ՆԿԱՐԱԳԻՐ

ԿԱՄ

ՆԱՂԱՇ

(Շարուն. և վերջ. տե՛ս Թիւ Ա. էջ 12)

7. Մկր. Նաղաշի մատենագրութիւնը և նորագիւտ տաղեր. — 8. Մկրտիչ Գանձասաց մը չփոթուած Նաղաշի հետ. — 9. Մկր. Նաղաշ և Կոստանդին Երզնկացի։

Մկրտիչ Նաղաշ բանաստեղծական քիչ բան թողած է, համեմատութեամբ Թլկուրանցւոյ և Աղթամարցւոյ։ Կոստանեանց՝ Մ. Նաղաշի անուան տակ տասներկու կտոր քերթուած հրատարակեց. ահաւասիկ անոնց այբուբենական ցանկը, նշանակուած՝ ուսկից որ արտագրուած և արտատպուած են։

Ա. — Ա՛յ անձն իմ, վա՜յ քեզ (էջ 20. Ձեռ. 1659)։
Բ. — Անձն իմ, արի՛ աղօթէ՛ (էջ 23. Ձեռ. 1959)։
Գ. — Անցանէ մեծութիւն (էջ 5. Ձեռ. 1617, 1627, 1695. Ցուցակ Ներս. Դպր. Հայ. Ձեռ. — Արարատ 1895)։
Դ. — Արարիչն արարածոց (էջ 12. Ձեռ. 1645, 1601, 1617. — Առաջին տպ. 1803ի Կ. Պոլսոյ Մաշտոցին մէջ. Ցուցակ Ձեռ. Ներս. Դպր. — Հանդէս Ամսօրեայ 1896)։
Ե. — Բլբուլն ի վարդն ասաց (էջ 26. Հայերգ)։
Զ. — Երազ է սուտ, եղբա՛րք (էջ 3. Ձեռ. 1685. Հանդէս Ամս. 1896 Թ. 2)։
Է. — Զինչ որ գեղեցիկ ծաղկունք (էջ 29. Հայերգ)։
Ը. — Հոգի՛ մի՛ ասեր ղարիպ (էջ 35. Ձեռ. 1695. 1617. Բազմ. 1861 և 1875. Ցուցակ Ներս. Դպ. 22)։
Թ. — Ղարիպին կեանքն է լալի (էջ 37. Ձեռ. 1695. 1617. Մաշտոց տպ. ի Կ. Պոլիս 1807. Արծուի Վասպուրական 1902–3)։
Ժ. — Նախ օրհնեմք (էջ 31. Ձեռ. 1617. Թերի)։
ԺԱ. — Նստէք ի մէջլիս (էջ 32. Ճռաքաղ 1860–1 եր. 216. Քնար. Հայկ. էջ 427)։
ԺԲ. — Սողոմոն մայրն իմաստութեան (էջ 13. Ձեռ. 1659, 1695)։

Կոստանեանց այս 12 կտոր տաղերէն երկուքը միայն կասկածի կ'ենթարկէ, այն է՝ Թ. և ԺԱ։ Առաջինը՝ «Արծուի Վասպուրականի» համաձայն՝ 1699ին տպուած ? Մուրատ բանաստեղծը յօրինած է։ Այդ տարակոյսը բոլորովին անհիմն է, քանի որ աւելի հին Ձեռագրաց մէջ արդէն կը հանդիպինք նոյն տաղին։ Այդ Մուրատը պարզապէս երգիչ մը պէտք է նկատել, ապահովապէս «Մուրատ Խիկար»ը, որ երգած է նաեւ այն գեղեցիկ տաղը՝ «Մարտն կու գայ ծաղկըներով» սկզբնաւորութեամբ, որ ցարդ Հայազուն ժողովրդեան բերանն է։

Միւս տաղը (ԺԱ) «Նստէք ի մէջլիս» որուն տանց սկզբնատառերը Նաղաշ կը յօրինեն՝ շատ հեռու է «Մկրտիչ Նաղաշ»ի ըլլալէ, բաղդատմամբ ոճին և լեզուին. իրաւամբ Հ. Տաշեան իր «Ցուցակ»ին մէջ Յովնաթան Նաղաշի կ'ընծայէ զայն։

Մեծ. Կոստանեանցին անծանօթ մնացած են մի քանի տպագրութիւններ՝ որոնց մէջ երեւցած է Մ. Նաղաշ իր տաղերով. գլխաւորն է այն տաղարանը՝ որ տպուած է 1513ին ի Վենետիկ, որուն երկու օրինակ միայն ծանօթ է հիմայ, մին կը գտնուի ի Կեսարիա[1] և միւսը յԵրուսաղէմ։

Մեծ. Նորայր ինձ փոխ տուաւ այդ Տաղարանին ճոյնութեամբ օրինակութիւնը՝ եղած Երուսաղեմայ օրինակէն՝ Խապայեան սրբազանին (այժմ կաթողիկոս Սսոյ) միջոցաւ։

Այդ 1513ի տպագրութիւնը, որ Մկրտիչ Նաղաշի մահուանէն մի քանի տասնեակ տարիներ վերջ եղած է՝ կը բովանդակէ հետեւեալ չորս քերթուածները.

Անձն իմ արի՛ աղօթէ (էջ 18–24)։
Ղարիպին կեանքն է լալի (էջ 24–31)։
Երազ է սուտ եղբարք (էջ 44–47)։
Արարիչն արարածոց մեզ բարկացաւ (էջ 56–64)։

Դարձեալ անծանօթ մնացած է Կոստանեանցին՝ 1785ին ի Կ. Պոլիս տպագրուած այն

---

1. Տրդատ եպ. Պալեան 1894ին «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ խօսած է այս տպագրութեան վրայ, զայն միայն իբր հին տպագրուած գիրք մը նկատելով, առանց կարեւորութիւն տալու անոր բովանդակութեան (էջ 360)։

digitised by A.R.A.R.@

Մաշտոցը՝ որ ունի յաւելուածին մէջ՝ Մկրտիչ Նաղաշի երկու տաղերը.

Արարիչն արարածոց մեզ բարկացաւ (էջ 316–9)։
Ղարիպին կեանքն է լալի ողբերգական (էջ 336–9)։

«Ազարաս» Ամսագրին խմբագիրը կ. Վ. 1900ի Յունուարի Յաւելուածով՝ «Նաղաշի երկու կիսատիպ տաղերը» կը հրատարակէ։ Առաջինն է «Երազ է սուտ եղարբ»։ կոստանեանցի հրատարակութիւնը ունի եօթը տուն. իսկ կ. Վ.ի հրատարակածը այդ եօթը տուներուն վրայ ուրիշ վեց տուն յաւելուած ունի, որ կը սկսի.

Ինչ շահ է քո զուր տանջդ, երբ յօտար երկիր կու տանեն.
Թէ շատ է թէ քիչ ջանաս, քեզ միայն պատանքդ է բաժին, (և այլն)։

Այս յաւելուածին թէ՝ տաղաչափութիւնը և թէ՝ իմաստը ո՛և է արգելք չունին այդ նախորդ եօթը տուներուն շարունակութիւնն համարուելու. զարմանալին այն է՝ որ մեզ ծանօթ բոլոր Ձեռագիրները և վերոյիշեալ 1513ին ապրուած Տաղարանը այդ յաւելուածը չունին։

Կոստանեանցի քով՝ Ժ. տաղը՝ «Նախ օրհնեմք զաստուածութիւն» սկզբնաւորութեամբ՝ չորսուկէս տուն միայն է. կ. Վ.ի յաւելուածը՝ տասնեւհինգ տուն է, ընդ ամենը տասնեւմին տուն, որոնց սկզբնատառք կը յօդեն «Նաղաշ Սարկաւագի՝ և սա յեձ»։

*

Նորագոյն տաղեր. — Մեր մատենադարանի Ձեռագիր Տաղարաններուն մէջ չգրտանք մէկէն աւելի նորագոյն տաղ մը Մկ. Նաղաշի անունով։

Այդ տաղը կը գտնուի մեր իմ Տաղարանին մէջ, որ բոլ երկոյղ յիշատակարան մը՝ (յէջ 125) օրինակուած է 1590ին։

Այդ քերթուածը անխորագիր է, սա սկզբնաւորութեամբ.

Աստուած անսկիզբն անպարագիր է անվազման
Հոսր և Որդի և սուրբ Հոգի Երրորդութիւն միասնական։

Այսպէս տասներեք տուն ունի, վերջին տունը կը վկայէ՝ թէ տաղիս հեղինակն է Մկրտիչ Նաղաշ.

Գերի Նաղաշ ողորմելի
աշխարհքս չէ քեզ մընալու
Տի մեռանիս, տի մեռանիս
է մշտանես ի գերեզման։

Մկրտիչ Նաղաշ՝ «Սողոմոն մայրն իմաստութեան» քերթուածին մէջ եւս՝ ինքզինքը կը յիշէ.

Գերի՝ Նաղա՛շ ողորմելի
ի քեզ Նպեաց դու յարաժամ։

Նաղաշի նորագիւտ երկրորդ տաղ մը պիտի համարելինք

Ամենայն փառք մարդոյ

սկզբնաւորութեամբ այրարինական տաղը՝ որ կը գտնուի մեր ձեռ. Տաղարանին մէջ (յէջ 151) սա խորագրով «Նարին՝ Հոգւոյ աստացեալ». այս Տաղէն առաջ կայ Նաղաշի «Ընդանէ մեծութիւն և փառք» քերթուածը. որով այդ Նարինը՝ Նաղաշի պէտք էր հակադրուիլ. բայց ուրիշ աւելի հին Տաղարան մը (ԺԶ), և ուրիշ Տաղարաններ Աստուածի կ'ընծայեն և ունին նաեւ այն յաւելուածը՝ որուն տողերուն սկզբնատառերը Աստուածի է կը յօդեն։

*
* *

8. Մկր. Նաղաշ շփոթուած ուրիշ Մկրտիչ Գանձասացի մ'ունի. — Մեծ. Հ. Տաշեան իր «Յուցակ հայկ. Ձեռագրաց»ի ցանկին մէջ (յէջ 1118) Մկրտիչ Նաղաշի կ'ընծայէ այն ամէն Գանձերը՝ որոնց տուներուն սկզբնատառերը Մկրտիչ կը յօդեն։ կ. կոստանեանց՝ հրատարակած Մկրտիչ Նաղաշի ներածութեան մէջ, (էջ խդ) կասկածեցաւ այդ Գանձերուն Նաղաշի գործը ըլլալուն վրայ. և ինքը ուրիշ Գանձ մը հրատարակելով — որուն տունք Մկրտիչ կը յօդեն՝ կը բաղ-

---

1. Ըստ ինքեան Է հարկափագի», զի մեռասանեորդ տունն սապէս կը սկսի.

«Փեսայն հարաւոյն կողման
Իւրոյիսի հարսին նման»

Ապահովապէս Ի-ով սկսած տաղը պէտք է առաջ դրուի։

digitised by A.R.A.R.@

գատէ անոր լեզուն և ոնը Նաղաշի տաղերուն հետ, և յայտնի տարբերութիւններ նկատելով՝ միւնոյն հեղինակի գործ չհամարեց։

Հ. Ցաշեան «Հանդէս Ամսօրեայ»ի մէջ (1899, էջ 305) քննադատելով Կոստանեանցի հրատարակած հատորը՝ ուշադրութեան առաւ Գանձերու խնդիրը և իրաւամբ՝ Կոստանեանցի փաստերը տկար համարեցաւ. վասն զի միւնոյն անձը ի հարկէ՝ տարբեր ոճ և լեզու պիտի գործածէ եկեղեցական և ժողովրդական երգերու մէջ։ Հոն Հ. Ցաշեան, Կոստանեանցի հարցման (որ է «կարծիքով թէ ցուցմամբ Մկրտիչ Նաղաշին կ'ընծայուին այդ Գանձերը») կը պատասխանէ. «Որչափ որ մեզի ծանօթ է՝ ոչ այժմ պարզապէս կարծիքով է որ Նաղաշ Մկրտչի կը տրուին այն 29 Գանձերը[1]. սկզբնաւորեն ինչպէս յայտնի է պարզապէս Մկրտիչ կը կոչեն. ապացոյց մ'ալ կրնայ համարուիլ Մեռելի Գանձն՝ որուն Նաղաշին գլչէն ըլլալն ապահով է[2]։ Գանձերը Նաղաշի [illegible]ած են ուրիշներ ալ, որոնց հետեւած էինք մենք ալ վերոյիշեալ տեղը, բայց ո՛և է ընդդիմութիւն չկայ, եթէ նոր քննութիւն մ'ուրիշ գանձասաց Մկրտչի վերագրէ»։

Ցարդ ըրած քննութեամբս՝ ծանօթ երեք գանձասաց Մկրտիչ կը գտնեմ.

Ա. — Մկրտիչ Նաղաշ. մէկ գանձ մը միայն «Գանձ Մեռելի», որ է «Արարիչն արարածոց մեզ բարկացաւ». այդ գանձը ինչպէս յայտնի է իր իսկ տողերով՝ գրուած է 1469ին երբոր ժանտախտը «զՄերսին քաղաքն տարար զամէնն լալագին»։

Բ. — Ուրիշ երկրորդ Մկրտիչ գանձասաց մ'ալ Երեւան կու գայ, նոյն ժէ դարուն մէջ, Մկրտիչ Նաղաշի ժամանակակից՝ ըստ Կոստանեանցի, որուն «Գանձ Ս. Սուքիասանց»ը[3] կը հրատարակէ Մկրտիչ Նաղաշի կենսագրութեան մէջ (յէջ խա), և բաւական զօրաւոր փաստով կը համարի՝ թէ այդ գանձը գրուած է 1441ի ատենները, Կիրակոսի կաթողիկոսութեան օրով։

Գ. — Երրորդ ՄԿՐՏԻՉ մ'ալ, որ 1350 թուականէն առաջ պէտք է գոյութիւն ունեցած ըլլայ՝ ես Երեւան կը հանեմ զօրաւոր փաստերու յենած։ Այս գանձասացը տրկիւնաւոր վարպետ մ'է կամ եպիսկոպոս մը՝ որուն կենսագրական ոչ է էէ յայտնի չէ. և միայն այս՝ որ իրեն գրութիւնքն են այն ամէն Գանձերը՝ զորս Հ. Ցաշեան Մկրտիչ Նաղաշի կ'ընծայէ, (և դեռ ուրիշ քանի մը յաւելուածներ ըստ մեր ս. Ղազարու գրչագրաց)։

Այդ յիշեալ Գանձերը կը գտնուին մեր մատենադարանի այն Գանձարանին մէջ՝ որ գրուած է 1394ին. կան նաեւ ուրիշներ զորս կարելի է գտնել մեր Բ. Գանձարանին մէջ, որ գրուած է 1371ին։ Եւ վասն զի այդ թուականին Նաղաշ Մկրտիչը և ոչ իսկ ծնած էր՝ անոր համար երբեք չենք կրնար իրեն վերագրել այդ Մկրտիչ կապող Գանձերը։

Բայց ով է այդ Մկրտիչը։ Հարցում մը որուն ստուգիւ դժուարին է պատասխանել, ինչպէս որ անպատասխան կը մնան սոյնպիսի հարցումներ՝ եղած Գրիգորի, Մովսէսի, Գէորգայ վրայ, որոնք այդ ժամանակները ապրած և շատ Գանձեր յօրինած են։

Մկրտիչ անունը ԺԴ դարէն առաջ ինչ որ կրցայ գիտել՝ բնաւ գործածուած չէ մեր պատմութեանց մէջ (Հմմտ. Հ. Զամչեանի ցանկը)։ Կիրակոս պատմագրին քով անգամ մը միայն այս անուան կը հանդիպինք. «Մկրտիչ Հանբերդոյ եպիսկոպոս»։ Սա

---

1. Հ. Ցաշեանի ցանկին մէջ 29 Գանձ կը համրուին բայց պէտք է 27 համարել, վասն զի «Գանձ ծննդեան և յայտնութեանն»ը՝ «Մաքուր և ամբիծ սուրբ Աստուածածին» (տ. էջ 424 ե) երկրորդ անգամ ալ կրկնուած է, վասն զի՝ նոյն գանձը ուրիշ Ձեռագրի մէջ (յէջ 435) ուրիշ օրուան է «Գանձ ծննդեան Գ աւուրն»։ Այդպէս կրկնուած է նաեւ «Մաքրեալ տաճար տէրունական», որ յէջ 436 խբ գրուած է «Ցասպանակ»ի տօնին համար, և նոյն «Մաքրեալ տաճար տէրունական» ուրիշ Ձեռագրի մէջ (յէջ 424 բ) «Եկեղեցւոյ» տօնին գրուած է։

2. Պակսիկ դիտելու է որ այդ Գանձը, ինչպէս և Նաղաշի ուրիշ ո՛և է տաղ՝ Մկրտիչ չեն կապեր իրենց տաւնեղրուն սկզբնաւորութիւնով։

3. Այդ Գանձին սկզբնաւորութիւնն է՝ «Մեծապայծառ տօնիս ըղձալի, ուրախացան մանկունք Սիոնի» (յէջ խե)։

digitised by A.R.A.R.@

ապրած է ԺԳ դարու մէջ, և այն եպիսկոպոսներէն մէկն եղած է՝ որ 1249ին Կոստանդին կաթողիկոսին (1221–1267) կանոնները կ'ընդունին՝ հաւանութեան ստորագրութիւն տալով։ — Թէ այդ Մկրտիչ Գանձասացը եպիսկոպոսական աստիճան ունի՝ կր վկայէ Վիեննական Մխիթ. Հարց մատենադարանի մէկ Ձեռագիրը (Հմմտ. Ցուցակ, Թ. 139, էջ 435 ժգ), որուն Տեառնընդառաջի «Միասնական սուրբ Երրորդութիւն» Գանձին իբր խորագիր ունի «Ի Մկրտիչ եպիսկոպոսէ». Նաղաշը չի համրցուիր, քանի որ նոյն Գանձը մեր 1394ին գրուած Գանձարանին մէջ կը գտնեմ։ Գանձասաց Մկրտիչը՝ իր Համբարձման Գանձը կը վերջացնէ՝ «Բարեխօսեա առ անմահ արքայն, գխաղաղութիւն տալ մեզ անսասան. եւս առաւել առհմիս հայկական, որք նեղութեամբ ի յաշխարհի կան։ Քահանայից հոգի զգաստութեան, Սարկաւագաց վարս անախտական, ժողովրդեանս մեր միաբան՝ արժանանալ քոյդ ողորմութեան»։

Այս տողերէս ինչ որ բնական է՝ կրնանք հետեւցնել՝ թէ Գանձասացս այնպիսի ժամանակի մը և աշխարհի մը մէջ կ'ապրի՝ յորում Հայ ժողովուրդը կը նեղուէր թշնամի դրացիներէ։ Գարձեալ՝ պէտք է եպիսկոպոս մը միայն գրէ այսպիսի տողեր՝ խնդրելով «զգաստութիւն քահանայից, անախտական վարք սարկաւագաց և իր հօտին (ժողովրդեանս) արժանանալ աստուածային ողորմութեան»։ Այս տողերը հաւանականութիւն կը ցուցնեն որ Մկրտիչ Գանձասացս է՝ նոյն ինքն Անբերդոյ եպիսկոպոսը 1250ի շուրջը ապրած. և գիտենք Կիրակոս պատմիչէն՝ որ այդ դարուն մէջ Արեւելեան Հայաստանը, ուր էր Անբերդ գաւառը՝ շատ հալածանք կրեց՝ մանաւանդ Թաթարներէն։

Ծանօթութեան համար այս եւս ըսեմ՝ որ ԺԵ–ԺԶ դարու մէջ գրուած Գանձարան մը (Թիւ 551) յէջ ա՝ Խաչատուր Կեչառեցւոյ «Աւետեաց» Գանձին հետեւեալ ծանօթութիւնը կը գնէ.

Գանձ Աւետեաց Աստուածածնին
Ի Տիրամայր սրբոյ կուսին, .
Երգեաց ըղտա Կեչառեցին,
Հայր Մկրտիչ վարդապետին։

Հ. Ալիշան «Այրարատ»ի մէջ[1] Խաչատուր Կեչառեցւոյ վրայ խօսելով՝ զինքը Մկրտչի հայրը կը համարի։ Հ. Տէվկանցը եւս իր «Հայերգ»ի յառաջաբանին մէջ[2] իբր երգիչները կը թուարկէ՝ կը գրէ. «Խաչատուր վարդապետ, Տարօնեցի (!) կամ Կեչառացի. Կոստանդին կաթողիկոս, Բարձրբերդցի։ Մկրտիչ վարդապետ, Կեչառացի (վերոյիշեալի որդի[3])»։ Քանի որ Հ. Տէվկանցի այս գրածը կը համաձայնի մեր վերոյիշեալ Գանձարանին տուած ծանօթութեան՝ ըսել է «Հայերգ»ի խմբագրիչը հիմ մ'ունի այսպէս գրելու։ Յիշեալ Գանձարանին այդ վկայութիւնը կ'ապահովէ զիս Մկրտիչ Գանձասացը Կեչառեցի Խաչատրոյ որդին համարելու. միթէ կարելի չէ՞ Անբերդի եպիսկոպոսն ալ Խաչատուր Կեչառեցւոյ որդին համարել. վասն զի Կեչառոյք վանքը և գիւղը շատ հեռու չէին Անբերդէն։ Բայց ժամանակագրութիւնը չի յարմարիր. վասն զի Խաչատուր Կեչառեցին պիտի ստիպուինք 1200ի շուրջը համարել, մինչդեռ ան ապահովապէս ԺԳ դարու վերջերը ապրած է։ Վերջապէս այսքան որոշ կրնանք ըսել՝ որ վերոյիշեալ Գանձասաց Մկրտիչը՝ չէ՛ Նաղաշը, և թէ՝ աւելի հաւանական է որ Խաչատուր Կեչառեցւոյ որդին ըլլայ՝ քան Անբերդոյ եպիսկոպոսը (1250)։

*
* *

9. – *Մկրտիչ Նաղաշ և Կոստանդին Երզնկացի. — Շատ յայտնի է՝ որ Մկրտիչ Նաղաշ կարդացած է Կոստանդին Երզնկացին և ազդուած անկից։*

Նաղաշի այլաբանական քերթուածները «Բլբուլն ի վարդն ասաց. խիստ անողորմ ես» կը յիշեցնէ Կոստանդինի ԺԵ քերթուածը։ Այլաբանական այդ ձեւը՝ («Վարդն ու Բլբուլը» որբազանուած անձնաւորել) Կոս-

1. Տես «Այրարատ» էջ 267-8։
2. Տես «Հայերգ» էջ ժ։
3. Այսինքն Խաչատրոյ։

digitised by A.R.A.R.@

տանդինին է, որուն հետեւած են թէ՛ Առաքել Բաղիշեցին և թէ՛ անոր ժամանակակիցը Մկրտիչ Նաղաշ։

Նաղաշի այս քերթուածին մէջ սոէպ կը հանդիպինք այն օտար բառերուն և ոճերուն՝ զորս Կոստանդին այդպիսի այլաբանական և սիրոյ քերթուածներու մէջ գործածած է. մի քանի օրինակներ գնեմ Նաղաշէն.

« Ջահր և լեղի », « Հասրաթ կայ յիմ որտիս », « մուշկ ու ամբար », « է՛ պատրի լուսին », « Է՜ լուլթֆ ու քարամ », և այլն։

Իսկ « Ջինչ որ գեղեցիկ ծաղկունք » տաղը՝ ձեւուած է Կոստանդինի ԺԱ և ԺԲ քերթուածներուն վրայ ։ Կոստանդին՝ այդ յիշեալ քերթուածին (« Այսօր եղեւ պայծառ գարուն ») մէջ՝ համառօտիւ գարունը կը նկարագրէ իր ծաղիկներով. վարդը կու գայ ի վերջոյ՝ Քրիստոսի դերը կատարելու՝ այդ Գարնան թատերաբեմին վրայ. և երբ այդ կոկոնը կը բացուի՝ միւս ծաղիկները՝ որ դեռ այդ կոկոնը չբացուած՝ խորհուրդ ըրած էին զայն կորել՝ կը թառամին, կը փախչին, « և եղեն գեղին »։

Կոստանդինի քով, այդ Վարդը՝ Յիսուսն է. իսկ միւս ծաղիկները՝ որ խորհուրդ կ'ընեն զՎարդը կորել՝ զՔրիստոս խաչել տուող քահանայք են։

Իսկ Նաղաշի քով՝

Ծաղկունքն մարգարէքն էին
Նահապետք և սուրբք առաջին.
Ծաղիկըն որ յետ նոցին՝
Ան Յիսուսն էր Հօր Միածին, (և այլն)։

Դարձեալ, Նաղաշը « Նախ օրհնեմք զԱստուածութիւնն » Հարսանեաց Տաղին մէջ՝ շատ իմաստներ ունի և նոյն իսկ տողեր՝ առնուած Կ. Երզնկացւոյ ընծայուած ԻՁ քերթուածէն։ Կոստանդին Գարունը կը նկարագրէ, իսկ Նաղաշ՝ անոր քանի մ'իմաստները առնելով՝ Հարսանեաց երգի կը վերածէ։ Աչհաւասիկ օրինակ մը.

КОՍՏ. ԵՐԶՆԿԱՑԻ

Ահա հոտըն պար գարնան՝
Իւր տեսն երեւի խընդման.
Ջինչ որ կայ պաղչայ, պօստան՝
Ծաղկունք ամենայն բացուան։

ՄԿՐ. ՆԱՂԱՇ

Ահա հոտըն գայր գարնան
Փեսյին տեսն էր խընդման,
Ցոր տեղ սիրելիք որ կան՝
Ամէնն ի հարսնիք թող գան։

Մինթէ ուրիշ բանաստեղծներ ալ ընդհակառակն՝ ազդուած չե՞ն Նաղաշէն։ Այս հարցմանս պատասխանը դժուար է առ այժմ տալ. քանի որ դեռ Տաղերը ամբողջութեամբ հրատարակուած չեն և անոնց կրած ազդեցութեան աղբիւրները ուսումնասիրուած չեն։

Միայն սա երկու տողերը

Քո մէկ հայելդ արժէ զքաղաքն Մաչին,
Ջէ Ջինումաչին մէկ հայելուդ գին[1]։

կը յիշեցնէ « Ծով աչք ամ քանի՛ նայիս »ի տողերը։

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ԴԷՊ Ի ԶՄՄԱՌ

Լիբանանու քղանցքին վրայ բազմած, մեղմօրէն ալեկոծուած գարեւանդի մը վրայ, երբ Պէյրութ առաջին անգամ ցոյց կու տայ նաւուն վրայ կանգնած ուղեւորին՝ իր մեգիչ արուարձանները, իր եւրոպական շքեղ պալատները, զորս կը ցրուէ կանաչութեան մէջ, արուեստի շնորհիւ՝ բնութեան կախարդանքը կրկնապատկելու համար, ուղեւորը հիացմամբ կ'ողջունէ այդ նոր Անտիոքը, Ասորիքի Աթէնքը՝ լի պատմական յիշատակներով։

Այնքան հրապուրիչ է ան՝ որ բոպէ մը առաջ կը փափագիս ինքզինքդ այդ կանաչութեան հովանիին տակ գտնել։

Նաւը արդէն խարիսխը ձգած էր, բայց պէտք եղաւ սպասել, մինչեւ որ անցագրի քննութիւնը կատարուի։

Պէյրութ եւս Կ. Պոլսոյ պէս ազգերու

---

1. Մկրտիչ Նաղաշի « Բլբուլն ի վարդն տաց »ի Ցերորդ տունը։

digitised by A.R.A.R.@